

**ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԵՐԿԻ ՄՈՏԻՎԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ՍԿԶԲՈՒՆՔԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ**

Ա. Ս. ԲԱԳՈՅԱՆ

ԳՊՀ դասախոս

Մոտիվային վերլուծությունը գեղարվեստական երկի վերլուծության համեմատաբար նոր սկզբունքներից է: Այն երկի բանասիրական վերլուծության բաժիններից մեկն է: Գեղարվեստական ստեղծագործության բանասիրական վերլուծությունն ամենաընդգրկունն է և բազմամակարդակը, որն իր մեջ ներառում է բնագրի կամ տեքստի թե՛ լեզվաբանական և թե՛ գրականագիտական վերլուծության բոլոր մակարդակները՝ սկսած հնչյունաբանությունից մինչև ոճաբանություն, գեղարվեստական պատումից մինչև գրական մոտիվ:

Իսկ ի՞նչ է մոտիվը: Մոտիվ եզրույթի հիմքում ընկած է լատիներեն *moveo*-շարժում եմ (լատ. *movēre*-շարժել, *motus*-շարժում, *motivus*-շարժում, շարժական) բառը, որի հիման վրա հետագայում առաջացել է ֆրանսերեն *motif* բառը, որն ունի մի քանի նշանակություն՝ մոտիվ, առիթ, շարժառիթ, պատճառ, դրդապատճառ, հանգամանք, հիմք, կաղապար և այլն: Նույն արմատն է ընկած լեյտմոտիվ եզրույթի հիմքում (գերմաներեն *Leitmotiv*՝ leit-առաջատար, գլխավոր+մոտիվ), որը նշանակում է հիմնական, գլխավոր, առաջատար մոտիվ:

Ստեղծվելով 18-րդ դարում իբրև երաժշտական եզրույթ՝ մոտիվ հասկացությունը լայն տարածում գտավ նաև այլ բնագավառներում և այժմ տարբեր նշանակությամբ է հանդես գալիս: Այսպես, երաժշտության մեջ մոտիվը մեղեդու պարզագույն ռիթմական միավորն է, հոգեբանության մեջ մոտիվը մարդու վարքագիծը կառավարող հոգեֆիզիոլոգիական գործընթացն է: Կերպարվեստի տարբեր ճյուղերում (գեղանկարչություն, նկարազարդում, ասեղնագործություն, զարդաքանդակ և այլն) մոտիվը ստեղծագործության մեջ մշտապես կիրառվող բնորոշ տարրն է, քրեագիտության ասպարեզում մոտիվ ասելով՝ հասկանում են հանցագործության դրդապատճառը և այլն:

Մինչդեռ գրականագիտության մեջ մոտիվը պատումային նվազագույն միավորն է, սյուժեի պարզագույն բաղադրիչ տարրը: Ոչ պատումային ստեղծագործությունների դեպքում՝ քնարերգության մեջ,

մոտիվը թեմատիկ անտրոհելի միավոր է, որը մարմնավորվում է առաջատար թեմաներում, սիմվոլներում, սյուժետային իրավիճակներում, կերպարներում և այլն¹:

Մոտիվը՝ իբրև գրականագիտական հասկացություն, որն իրենից ներկայացնում է պարզագույն չտրոհվող պատումային միավոր, շրջանառության մեջ մտավ 19-րդ դարի վերջին ռուս անվանի բանասեր Ա. Ն. Վեսելովսկու հիմնարար ուսումնասիրությունների արդյունքում: Նա գտնում էր, որ մոտիվները նախնադարյան մտքի կամ կենցաղային դիտողության արգասիք են, որոնք մարդկության զարգացման առաջին փուլերում՝ համապատասխան կենցաղային և հոգեբանական պայմաններում, ամեն մի ժողովրդի կողմից ստեղծվել են ինքնուրույն, այդուհանդերձ ունեցել են ընդհանուր գծեր (օրինակ՝ այն պատկերացումները, ըստ որոնց՝ արևն աչք է, արևն ու լուսինը՝ քույր ու եղբայր, և այլն)²: Մոտիվը, ըստ Վեսելովսկու, պետք է տարբերել սյուժեից, որը մոտիվների զուգակցությունն է: Սյուժեն հյուսվում է տարբեր մոտիվների հենքի³ վրա, այսինքն՝ սյուժեն մոտիվների մտահնար, քմահաճ համադրությունն է, երբ միևնույն կառուցվածքային միավորները հայտնվում են տարբեր դիրքերում և տարբեր կապերի և փոխհարաբերությունների մեջ մտնում: Սակայն դա հանգեցնում է անվերջ բազմազանության⁴, ուստի Վեսելովսկին առաջարկում է սահմանափակել մոտիվների համակցությունների թիվը: Ըստ նրա մոտիվի պարզագույն տեսակը կարող է արտահայտվել $a+b$ բանաձևի տեսքով: Օրինակ՝ չար պառավը չի սիրում գեղեցկուհուն և կյանքի համար վտանգավոր առաջադրանք է տալիս նրան: Բանաձևի յուրաքանչյուր մաս ընդունակ է ձևափոխվելու, և հատկապես b -ն ենթակա է աճման: Բացի դրանից՝ շարունակում է Վեսելովսկին, առաջադրանքները կարող են լինել 2, 3 (3-ը ժողովրդի սիրած թիվն է) և ավելի⁵:

¹Տե՛ս՝ Мотивы поэзии Лермонтова/ Лермонтовская энциклопедия. М., Советская Энциклопедия, 1981, 784 страниц, стр. 291.

² Веселовский А.Н., Историческая поэтика. М., 1989, с.305.

³ Նույն տեղում:

⁴www.listos.biz/филология/николаев-а-и-основы-литературоведения/теория-мотивов-и-ее-вариации/ . Տե՛ս նաև՝ Николаев А.И., Основы литературоведения, Иваново, ЛИСТОС, 2011, 256 страниц.

⁵ Веселовский А.Н., Историческая поэтика. М., 1989, с.301.

Բ.Վ.Տոմաշևսկին իր «Գրականության տեսություն: Պոետիկա» գրքում մոտիվը համարում է ֆաբուլայի նվազագույն տարրը, «ստեղծագործության անբաժանելի մասի թեման»: Բացի դրանից՝ նա ներկայացնում է մոտիվների ինքնատիպ դասակարգում՝ դրանք բաժանելով կապակցված և ազատ, դինամիկ և ստատիկ խմբերի¹:

Ուշագրավ են նաև Կ. Յունգի դիտարկումները: Ըստ նրա՝ չի կարելի նույնացնել մոտիվը և արքետիպը: Յունգը բերում է բնագրերևակայություն-խորհրդանշական պատկերներ հաջորդականությունը, որտեղ վերջիններս հենց նա կոչում է արքետիպեր: Արքետիպերը հանգեցնում են մոտիվների ձևավորմանը, որոնք իբրև պատկերացումներ «կարող են զգալիորեն տատանվել մանրամասներում՝ ընդ որում չկորցնելով իրենց հիմնական ուրվագիծը (սխեման)»²:

Ա. Ի. Նիկոլանի կարծիքով՝ մոտիվը նույն կարգի «տեսական վերացարկում» է, ինչպիսին է, օրինակ, «ընդհանրապես մարդ» բնորոշումը, քանի որ մարդն ունի սեռ, տարիք, ազգություն և այլն³: Այդուհանդերձ, գրականագետը փաստում է, որ մոտիվային վերլուծությունը թույլ է տալիս բանասերին տեսնել տարաբնույթ սյուժեների ոչ ակնհայտ փոխառնչությունները:

Մոտիվային վերլուծությունը զարգացման նոր մակարդակի հասավ 1970-ական թվականներին Տարտուի համալսարանի պրոֆեսոր Բ. Գասպարովի շնորհիվ, որը լինելով կառուցվածքաբանական դպրոցի ներկայացուցիչ և կրելով Յու.Լոտմանի կառուցվածքաբանական պոետիկայի անմիջական ազդեցությունը՝ իր նոր տեսությամբ հակադրվեց վերջինիս: Եթե Լոտմանի հետևորդներն ընդգծում էին տեքստի մակարդակների որոշակի կայուն դասավորությունը և տեքստի կառուցվածքը համեմատում բյուրեղացած ցանցի հետ, ապա մոտիվային վերլուծության կողմնակիցները մերժում էին տեքստի մակարդակների տեսությունը՝ համարելով, որ մոտիվը թելերի պես ներթափանցում է տեքստի մեջ՝ հիշեցնելով գործվածքի հենքը:

¹ Томашевский Б.В., Теория литературы. Поэтика: Учеб.пособие, М., Аспект Пресс, 1999, с.120-122.

² Юнг К.Г., Архетип и символ, Издательство "Ренессанс" СП ИВО-СиД, с. 63.

³ www.listos.biz/филология/николаев-а-и-основы-литературоведения/теория-мотивов-и-ее-вариации/.

Վ.Ե.Խալիզևի բնորոշմամբ՝ մոտիվային վերլուծությունը գեղարվեստական տեքստի և ցանկացած սեմիոտիկական օբյեկտի նկատմամբ հետկառուցվածքաբանական մոտեցման տարատեսակ է, որի էությունը կայանում է նրանում, որ վերլուծության միավոր են համարվում ոչ թե բառերն ու նախադասությունները, այլ մոտիվները, որոնք լինելով տարամակարդակ միավորներ՝ կրկնվում են, տարափոխվում և տեքստում միահյուսվելով այլ մոտիվների հետ՝ կերտում են ստեղծագործության անկրկնելի քնարականությունը:

Խալիզևի կարծիքով՝ մոտիվային վերլուծության տեխնիկան որոշ առումներով հիշեցնում է Ֆրեյդի հոգեվերլուծության տեխնիկան: Ընդ որում երկու դեպքում էլ գործ ենք ունենում այնպիսի իրավիճակների հետ, երբ տասը վերլուծաբաններից յուրաքանչյուրի կարծիքը կարող է չհամընկնել մյուսների կարծիքի հետ, քանի որ սեմիոտիկական օբյեկտի կառուցվածքը անվերջ է և անսպառ:

Գեղարվեստական երկի վերլուծության մոտիվային սկզբունքի նկատմամբ ուշադրությունը մեծանում է նախորդ դարի 90-ական թվականներին, երբ Ռուսաստանի ԳԱ Սիբիրի մասնաճյուղում Ե.Կ.Ռոմոդանովսկայայի (1937-2013) ղեկավարությամբ բանասերների մի մեծ խումբ նախաձեռնում է ստեղծել ինքնատիպ մի բառարան-տեղեկատու, որտեղ ընդգրկվելու են ռուս գրականության մեջ երբևէ հանդես եկած բոլոր սյուժեներն ու մոտիվները՝ որոշակի դասակարգմամբ: Շուրջ տասներեք տարվա ուսումնասիրությունների արդյունքում ստեղծվում են «Ռուս գրականության սյուժեների և մոտիվների բառարան-տեղեկատուի» երեք պրակները¹, որոնք, ըստ էության, նորույթ էին նաև արևմտյան գրականագիտության մեջ և մեծ հետաքրքրություն են առաջացնում²: Առաջին պրակում, օրինակ, խոսվում է աստվածաշնչյան կերպարների, ժողովրդական հեքիաթների և առասպելների հերոսների մասին, երկրորդում ներկայացվում են արևմտաեվրոպական գրականությունից փոխառնված սյուժեներ, տոնացուցային՝ ծննդյան և զատկական սյուժեներ և այլն, իսկ երրորդ պրակում զետեղված են անտիկ

¹ Словарь-указатель сюжетов и мотивов русской литературы. Экспериментальное издание, под редакцией Е.К.Ромодановской, вып. 1, Новосибирск 2003; вып. 2, Новосибирск 2006; вып.3, Новосибирск 2008-2009.

² Клаудио Наполи, Словарь-указатель сюжетов и мотивов русской литературы и Материалы, Заметки об одном сибирском проекте, www.sites.utoronto.ca/tsq/39/tsq39_napoli.pdf.

առասպելաբանությանն առնչվող մոտիվներ (աստվածներ-մահկանացուներ, հերոսներ և սխրանքներ), անցյալի պատմական կոնկրետ անձանց վերաբերվող սյուժեներ և այլն: Ներկայումս այս ուսումնասիրությունը թերևս միակն է իր տեսակի մեջ:

Հայ գրականագիտության մեջ թեև բազմիցս խոսվել է տարբեր մոտիվների դրսևորումների և փոխառնչությունների մասին, սակայն մոտիվ եզրույթի տեսական ըմբռնումների վերաբերյալ առաջին լուրջ ուսումնասիրությունները վերաբերում են վերջին տարիներին, (տե՛ս Ա.Ջրբաշյանի «Պատմողական երկի կառուցվածքային մակարդակները» և «Սյուժե և ֆաբուլա» հոդվածները)¹:

Հայ գրականության հիմնական մոտիվները վերլուծելիս մեծ մասամբ կարող ենք կրկնել ռուս գրականության մեջ հանդես եկող մոտիվների ստվար մասը, մասնավորապես անտիկ մշակույթին և առասպելաբանությանն առնչվող, աստվածաշնչյան թեմաներին վերաբերող, եվրոպական գրականության մեջ առկա բազմաթիվ մոտիվներ, ինչպես նաև բուն ռուսական մոտիվներ, որոնք, 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած, մեծապես ազդել են հայ հասարակական մտքի ձևավորման, հետևաբար և գրականության վրա: Սակայն մեր գրականության մեջ առկա են մոտիվներ, որոնք, ըստ էության, բացակայում են աշխարհի ժողովուրդների մեծ մասի գրականության մեջ: Դա պայմանավորված է հայ ժողովրդի ազգային կյանքի առանձնահատկությունների, աշխարհընկալման և ավանդույթների, հայության անցած պատմական դժվարին ուղու, տարբեր ողբերգական իրադարձությունների, ազգային հոգեբանության և նման այլ հանգամանքներով: Մասնավորապես պանդխտության, ցեղասպանության, հայրենազրկության և նման մոտիվներ կարելի է նկատել առանձին ժողովուրդների գրականության մեջ: **Խաչագողի, բրաբիոն ծաղկի և բրաբիոն ծաղիկ որոնողի, երկաթե շերեփի և թղթե շերեփի, ծիրանափողի և այլ մոտիվներ եզակի են, զուտ հայկական և ընկալելի՝ միայն որոշակի կոնկրետ համատեքստում:** Մինչդեռ ազատության, եղբայրության, հավասարության, հայրենիքի, ընտանիքի, ճանապարհի, տան, կենդանական և բուսական աշխարհի, բնության

¹ Գրականության տեսության արդի խնդիրներ. Ռիսումնական ձեռնարկ, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2016թ.:

առանձին երևույթների և այլնի՝ առանձին մոտիվները, և չարի-բարու, լույսի-խավարի, հավատարմության-դավաճանության, մեղքի-հատուցման, կյանքի-մահվան, նաև՝ մարդ-բնություն, երկինք-երկիր, սեր-ատելություն, խելոք-հիմար, հարուստ-աղքատ, ուժեղ-թույլ և նման բազում-բազում զուգադիր մոտիվները բնորոշ են գրեթե բոլոր ժողովուրդների գրականությանը, քանզի առնչվում են համամարդկային խնդիրների և արժեքների, մարդկային տարբեր որակների՝ առաքինությունների և արատների:

Հայ գրականության մեջ առկա բազում մոտիվներ առանձնանում են իրենց ներքին բովանդակությամբ, իմաստային նրբերանգներով և այլն, որոնք հանգամանալից վերլուծության կարելի է ենթարկել և հնարավորինս լիարժեք ընկալել և մեկնաբանել միայն որոշակի համատեքստում: Ասվածը հիմնավորենք պարզ օրինակով. հայկական հայտնի առածում ասվում է՝ «Ամեն փայտ շերեփ չի դառնա, ամեն սար՝ Մասիս»: Այստեղ մենք գործ ունենք առնվազն չորս մոտիվի հետ՝ փայտ, շերեփ, սար, Մասիս, որոնցից յուրաքանչյուրն այլ համատեքստում այլ նշանակություն է ձեռք բերում: Այսպես, փայտի մոտիվը եթե զուգադրվում է ծիրանենու մոտիվի հետ, ընկալվում է իբրև ծիրանափող՝ հայկական տխուր նվագարան: Շերեփի մոտիվն, ի թիվս այլ ընկալումների, հայ գրականության մեջ կոնկրետ նշանակություն է ձեռք բերում՝ հայտնվելով «երկաթե շերեփ» և «թղթե շերեփ» հակադիր կապակցություններում: Սարի մոտիվն, իր հերթին, «սարեր շուռ տալ» կապակցության մեջ ընկալվում է անհնարինության իմաստով: Իսկ Մասիսը, որ բիբլիական Արարատ լեռն է, հայ գրականության մեջ հանդես է գալիս իբրև կորսված հայրենիքի, անհաս երազանքի, սրբության, փառքի, հավերժության և այլնի խորհրդանիշ: Նույնպես և Արաքսը, որը մի դեպքում հանդես է գալիս իբրև մայր գետ, որի մոտիվը բնորոշ է բազմաթիվ ժողովուրդների գրականությանը, մյուս դեպքում ընկալվում է իբրև հայ ժողովրդի ողբերգության ականատեսը: Բարդին, որն առակներում հաճախ խորհրդանշում է գոռոզություն, մեծամտություն, պարծենկոտություն և այլն, հայ քնարերգության մեջ մարմնավորում է հայրենի եզերքը, հեռվում թողած հայրենիքի կարոտը և այլն: Այդպես և ծիծեռնակն ու կռունկը, որոնք բուն իմաստով հանդես են գալիս իբրև գարնան ավետաբեր թռչուններ, բայց հայ գրականության մեջ սերտորեն կապված են պանդխտության, կարոտի, հիշողության և հեռվում թողած հայրենիքից «խապրիկ բերողի» մոտիվների հետ և այլն:

Վերը նշված օրինակները շարունակելի են և դեռևս բավարար կերպով հետազոտված չեն: Ու թեև մեզանում տարբեր հեղինակներ առանձին քննության են ենթարկել գրական տարբեր ստեղծագործություններ՝ ըստ նրանցում առկա հիմնական մոտիվների, սակայն հայ գրականագիտության մեջ այս ասպարեզը համակարգային մոտեցման և հիմնավոր ուսումնասիրման կարիք ունի:

***Բանալի բառեր՝** մոտիվ, մոտիվային վերլուծություն, գեղարվեստական տեքստ, ժողովրդական բանահյուսություն, առասպելաբանություն, հայ գրականություն, ազգային կյանքի առանձնահատկություններ, զուտ հայկական մոտիվներ:*

FORMATION AND DEVELOPMENT OF THE PRINCIPLE OF MOTIVE ANALYSIS OF THE LITERARY TEXT

A. S. BAGOYAN
GSU Lecturer

Motive analysis is a relatively new principle of philological analysis of the literary text. This principle is currently most developed in Russian literary criticism in the form of an index-dictionary of plots and motives of Russian literature, which shows the motives common to many people of the world. However, there are motives that are unique and typical to Armenian literature. These motives require a systematic approach and thorough research.

ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ ПРИНЦИПА МОТИВНОГО АНАЛИЗА ХУДОЖЕСТВЕННОГО ТЕКСТА

A. С. БАГОЯН
Преподаватель ГГУ

Мотивный анализ является сравнительно новым принципом филологического анализа художественного текста. Этот принцип в данный момент наиболее развит в русском литературоведении в виде словаря-указателя сюжетов и мотивов русской литературы, в котором приведены мотивы, общие для многих народов мира. Однако существуют мотивы, которые уникальны и характерны только для армянской литературы. Эти мотивы нуждаются в системном подходе и основательном исследовании.